

ԽԱՉԱՏՈՒՐ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Անցյալ դարի առաջին կեսի արևմտահայ հրապարակախոսության աչքի ընկնող դեմքերից է Խաչատուր Ոսկանյանը (1818—1900), որի կյանքին ու գործունեությանը փոքր-ինչ հանգամանորեն անդրադառնալն այսօր առավել ևս անհրաժեշտ է թվում, երբ համոզվում ենք, թե հայ լրագրական խոսքին ու արվեստին մատուցած ծառայությունների դիմաց որքան քիչ տեղ է հատկացված նրան մեր մամուլի պատմության մեջ:

1840 թ. նոյեմբերի 30-ին Խ. Ոսկանյանը Կ. Պոլսում հիմնեց «Ազդարար Բյուզանդյան» թերթը, որն անմիջապես, հրապարակման առաջին իսկ օրերից, իր վրա բեռեց ամիրայական շրջանների զգուշավոր ուշադրությունը, և ի դեմս նրանց ձայնատար «Արշալույս Արարատյանի» (Զմյուռնիա), վաստակեց անհաշտ մի թշնամի:

Պատճառը թերթի հրատարակիչ-խմբագիր Ոսկանյանի քաղաքական ազատամիտ ու առաջադեմ հայացքներն էին, որոնք չէին կարող ընդունելի լինել արևմտահայ տիրող պահպանողականության կողմից:

Թերթի առաջադրած խնդիրները գաղափար են տալիս լուսավորական այն լայն ծրագրի մասին, որ իր առջև դրել էր Խաչատուր Ոսկանյանը:

«Ազդարար Բյուզանդյանի» առաջին համարը¹, որի մասին Գ. Գալեմբարյանն իրավացիորեն ասել է, թե այն շատ ավելի հարուստ է նյութով, քան «Արշալույս Արարատյանի» առաջին համարները, ավանդույթի կարգով սկսվում է «Ժանոթություն»։ Ընթերցողներին ներկայացնելով նորաստեղծ թերթը, ժանոթությունն անմիջապես մատնում է ազատ ու համարձակ գրելաոճին վարժված, մտածելակերպի կաշկանդումներից զուրկ, դյուրահաղորդ և հումորի զգացում ունեցող լրագրողի ձեռքը: «Սովորության նայելով,— գրում է Խ. Ոսկանյանը հիշյալ առաջաբանում,— պետք է որ մենք ալ առաջի կազեթանիս ըլլալուն՝ առաջաբանութենով մը սկսեինք. այլ գրքերուն մեջը գտնված առաջաբանութեններուն վիճակը տեսնելով՝ (որոնք քիչ մարդիկ կկարդան) ու ալ նոյ. 2-ին հայտարարություն մը հրատարակելով (որով դիտավորություննիս պետք եղածին չափ հասարակության ծանուցինք), չենք ուզեր որ սովորություն է տեյի՝ պարապ տեղը գլխացավություն տանք ու ուրիշ հարկավոր ու օգտակար բաներէ ալ աս աղագավը ետ մնանք»:

Համառոտ շարադրելով թերթի խնդիրները, Ոսկանյանը նշում է, որ նորաստեղծ լրագրում, բացի քաղաքական ու առևտրական լուրերից, հրատարակվելու են «...բանասիրական, արհեստական ու զբոսական բաներ ալ... ինչու

¹ Մեր ձեռքի տակ ունենք այս թերթի միկրոթապավենը միայն, որ ստացել ենք Վիեննայի Մխիթարյան միաբանությունից:

որ՝ ազգիս ամեն կերպիվ լուսավորվիր միշտ մտքերնուս չի հանելով, կուզենք որ գիտության ու բարոյական վերաբերյալ բաներ ալ հասարակ լուրերուն հետ տարածենք»:

Տպագրելիք նյութերը վաղօրոք պլանավորելով և ուրվագծելով, Ոսկանյանը ալդ մասին տեղյակ է պահում իր ընթերցողներին: «Ուստի գրած բաներնիս վերջը հասարակության օգտակար ըլլա տեյի անանկ պիտուական ու չի գտնված սրբերե թարգմանություն ընել կուտանք՝ որ տարի գլուխ կապեմանիս տետր շինելով, մեկ անգին գիրք մը ըլլա ունեցողին ձեռքը»:

Ոսկանյանը չի ուզում, որ ընթերցողները պասիվ գիրք բռնեն թերթի նկատմամբ: Նա խնդրում է բաժանորդներին և թերթի կարդացող «այլ անձանց» հետաքրքիր թվացող նյութեր ուղարկել խմբագրատուն, որոնք նա կտպագրի սիրով, միայն թե այդ նյութերը չփոխեն թերթի ուղղությունը: Նա արգելում է «օսմանյան տիրապետության դեմ խռովելն ու մէջ մը ալ կրոնքի վրա վիճաբանություն ընելը», որոնցից ամեն կերպ աշխատում է խուսափել:

Քաջատեղյակ օսմանյան տերության բարբերին, Ոսկանյանը թերեւս կարիք էլ չուներ ընթերցողներին այս առթիվ զգուշացնելու, բայց շնայած դրան, նա իր ենթագրյալ թղթակիցներին գիտակցաբար արգելում է այն, ինչն արգեն չգրված օրենք էր Խորքիայում:

«Քաղաքական լուրեր» վերնագրի տակ «Ազդարարն» անդրադառնում է եզրպատկան գեպերին և ընտրելով ժամանակի հայ լրագրությանը դեռևս անծանոթ մի ձև, նյութը տպագրում է «Բարեկամի» անունից: Դիմելով թերթի խմբագրին, «Բարեկամը» պատմում է «Մսրի ևրկրում» տեղի ունեցած իրադարձությունները: Նամակի ոճը աշխույժ է, ընթերցվող: «Սիրելիս,— ասվում է այնտեղ,— գիտես որչափ կուրախանամ, որ քեզի այս առաջի նամակովս հաճելի ու զվարճալի լուրեր պիտի տամ»: Այդ լուրերը վերաբերում էին 1840 թ. Եզրպատնում ստեղծված ծանր իրադրությունը, երբ Անգլիայի, Ավստրիայի, Ռուսաստանի և ասպ սրանց միացած Ֆրանսիայի ուժերով ծնկի էր բերվում Ստամբուլի զահի հավակնորդ Մուհամեդ Ալի փաշան: Մեծ Բրիտանիան ցանկանում էր մեկ զնդակով երկու նապաստակ սպանել՝ ավելի խորացնելով Թուրքիայի զաղութացումը և վերջնականապես իրեն ենթարկելով Եզրպատնը: Թերթը ներկայացնում է Ալեքսանդրիայում անցկացված նավատորմի ադմիրալ Նաբեին, որը առանց այլևայլ ձևականությունների ու տերություն արտոնագրի, ուղտիմատում էր ներկայացնում Մուհամեդ Ալիին, պահանջելով շտապ կարգով զորքերը ետ կանչել Սիրիայից: Նաբեին նամակին Եզրպատնի փաշան ժըխտական պատասխան է տալիս, թերեւս հույս դնելով Ֆրանսիայի օգնության վրա: Բայց հետաքրքրական է, թե ինչպես է թերթը նկարագրում ադմիրալի վարքագիծը. «...Այս ծովապետը ևրբոր նամակը բացավ ու տեսավ, որ փաշան պայրամը պատճառ բռնելով կուղեր որ այս բաները վերջացեն՝ օրե օր գցե, իսկույն կրակոտությունը բռնելով վափոռը հեծավ ու եկավ քաղաքին առաջին դրոշակը քաշեց կանգնեցավ, դօռ ըլան սապհընրդ խայր օլսուն ըսելու»:

Փաշան երբոր այս անձնապաստան միևիստորը տեսավ, ստիպեցավ որ հրավիրե տեսնվելու:

Քոմոտոր նախիչեն սենյակեն ներս մտնելուն պես բերանը բացավ ու կարծեմ թե բարեվ ու աստծո բարինն ալ այս էր. «Փաշա, քու ասպվինությունդ՝

քու զորքերդ են. այլ զիտնաս որ կխափվիս, ինչու որ զորքերդ օրե օր քեզմե կփախչին... կուղեմ, որ Ասորեստան ունեցած զորքերդ հիմա ետ կանչես ու օսմանցոց նավատորմիդը ետ տաս. թե որ այս ըսածիս դեմ կենաս, գիտցած ըլլաս որ՝ մեկ ժամուն մեջ Ալեքսանդրիա ուրիշ փաշա մը կտեսնես իրեն տերը...»:

Ահա այսպիսի խոսքերով է ներկայացվում Անդլիայի պատվիրակը: Նրա անվերապահ պահանջները Մուհամեդ Ալիից թեկադրված էին Լոնդոնից, իսկ ադմիրալը վստահ էր իր պետության ամենազորությունը: Նույն համոզման է գալիս նաև ինքը՝ ըմբոստ փաշան, որի մասին թերթը գրում է. «...Երբոր քոմոտորը լռեց, փաշան մորուքը ձևաբեր առավ, ինչու որ իրավի գիտեր թե խոսողը հին լակեզեմոնացիներուն մեկն էր, խոսքերը անշափ կարձ ու զորեղ...»: Եվ խմբագիրը, որ ինքն էլ բնավորությամբ անհաշտ ու ըմբոստ էր, այսպես է մեկնաբանում ստեղծված դրությունը. «Այս դաշնադրությունը անարժանաբար ու անխոհեմությամբ եղած է, ինչու որ Բպրահիմ փաշան՝ Ասորեստան պաշարյալ կեցած ետրեն աս դաշնադրությամբը պիտի իր ունեցած զորքերովը Ալեքսանդրիա տարվի ու հոն Մեհմետ Ալի փաշային հանձնվի. ինչու. աս ո՞ր խելացին կրնե...»:

Ասկից բանը հայտնի կերևա թե՛ միտքերնին դրեր են որ Մեհմետ Ալի փաշան ամեն կողմեն սխմելով վայնի հալուն բերին ու իրեն ըրած ամբարտապանությունը իրեն զգալ տան»:

Եվ պախարակելով Եգիպտոսի նկատմամբ Ֆրանսիայի նոր դիրքորոշումը, «Ազդարար Բյուզանդյանը» բացակայնում է. «Խեղճ Մեհմետ Ալի փաշան կարծեմք թե բնուած ազատությունը լուսավորյալ ազգերուն մեջ պիտի չի գտնա ու կարելի է որ ճեղայիցի Տայիին պես Ամերիքա փախչիլը վերջը միտքը պիտի առնե»:

Խմբագրի ակնարկը հասկանալու համար նշենք, թե ով էր այդ «Տային»։ «Զորօրինակ ճեղայիցի Տայիին մեկը մեկուն նեղանալով հրամայեց, որ գլուխը կտրեն. այլ գաղղիացի օֆիցիալները ասոր դեմ կենալով՝ երբոր ըսին թե ատանկ բան չըլլար, մենք օրենք ունինք, ուստի պետք է, որ հանցավորը օրինով դատվի, և թե որ մահապարտ գտնվի, ան ատենը անոր պատիժը կվճարենք, Տային դարձավ ըսավ թե՛ աս ձեր ինչ բաբուճիս ազատությունն է, որ մարդը իր ուզածը չի կրնար ընել, ես հոս ալ չեմ կենար, Ամերիքա կերթամ, ինչու որ յսած եմ, թե՛ անտեղը ազատություն կա»:

Իհարկե «Տայիի» մասին արված ակնարկը իր սուր ծայրով ուղղված էր Մուհամեդ Ալիին, որը ազատ ու մեծ ինքնակալության էր ձգտում՝ ոտնահարելով եվրոպական տերությունների կամքը:

«Ազդարար Բյուզանդյանի» տպագրած նյութերը նշանակալից են իրենց բովանդակությամբ: Նրա առաջադրած խնդիրներն ու դրանց լուծումները դրոսեորում են խորին մտահոգություն դեպի ժողովրդի լուսավորությունը: «Բանասիրական» բաժնի հոդվածում ազգը կրթելու իր միտումը այս ձևով է անցկացնում Ոսկանյանը. «Կաղեթա կարդալուն նպատակը աշխարհիս վրա եղած անցքերեն տեղեկություն ստանալով բանիբուն ըլլալ է: Ուրեմն կաղեթայի մեջ գտնված լուրերեն շահավորվելու ու անոնց համը առնելու՝ պետք է, որ աշխարհադրություն ու պատմություն, այսինքն երկրիս ինչ ու ինտոր ըլլալը ու անոր վրայի բնակվող զանազան ազգերուն ով և ուր տեղ ըլլալը գիտնանք»: Գիտության ու առօրյա կյանքի անխուսափելի միասնությունը շեշտելով, «Ազ-

դարա՛յ Բյուզանդյանը» խոստանում է ժամանակ առ ժամանակ անդրադառնալ աշխարհագրությանն ու պատմությանը, մանավանդ որ դրանց միջոցով ընթերցողը ոչ միայն ծանոթանում է տարբեր ժողովուրդների կենցաղի ուսանելի կամ դվարձալի կողմերին ու սովորություններին, այդ երկրների աշխարհագրական դիրքին, այլև սովորում է բարեկարգ ապրուստի հասնելու նրանց գործադրած ձևերը, առևտրի, ձարտարվեստի կատարելությունները։ Այնինչ, հանդիմանանքով խոստովանում է խմբագիրը, «փառք աստծո», հայ ընթերցողներիս մեջ «շատերնիս կանք, որ Ամերիբա որ կողմը ըլլալը ու ալ հոն ինտոր երթցվելը չիյտենք»։

Խ. Ոսկանյանի լուսավորական ընդարձակ ծրագիրը, կարելի է ենթադրել, խիստ ուսանելի պետք է լինե՛ր արևմտահայ ընթերցողի համար, եթե տարաբախտաբար շուտ չփակվե՛ր այդ հետաքրքիր թերթը։ Լրագրի բնաբանն էլ, կամ ինչպես ասում է Գալեմբարյանը՝ *Niotto*-ն, «Ազգի մը լուսավորությունը գիտութենեն ու կրթութենեն առաջ կուգա» տողերն էին, որոնք աչքի էին ընկնում թերթի ձակատին։

Որպես լուսավորիչ-հրապարակախոս՝ Ոսկանյանը շատ կտրուկ է դնում գիտությանը հաղորդակից լինելու անհրաժեշտությունը։ «Բարոյական» վերնագրով համառոտ նյութերի մեջ նա զարգացնում է այն միտքը, թե մարդու իմացածը մակերեսային ու թեթևակի չպետք է լինի, այլ գիտությունը մարդը պարտավոր է ուսումնասիրել խորությամբ ու մասնագիտորեն։ «Աշխարքիս երեք տեսակ տգիտություն կա, — գրում է նա, — մեյ մը բնավ բան մը չգիտնալն է, երկրորդ գիտցած բանդ աղեկ չի գիտնալ։ Ու երրորդն ալ՝ հարկ եղած բանը չի գիտնալ ու հարկ չեղածը գիտնալ»։

Առևտրական լուրերի, միջազգային գների վերաբերող հաղորդումների հետ, որոնք անշուշտ քաղվում էին եվրոպական թերթերից, «Ազգարար Բյուզանդյանը» չի մոռանում ընթերցողներին մատչելի կերպով հաղորդակից անել գիտության հետաքրքրաշարժ նորույթներին ու զանազան «արվեստների» գաղտնիքներին, ինչպես, ասենք, երկաթի ոսկեղօծման եղանակն էր։ Վերջապես, ծանուցումների, երթևեկության նոր միջոցների ու նրանց չվացուցակի, առևտրական նոր բացված խանութների և այլ հայտարարությունների կողքին շորրորդ էջում կարդում ենք խոստացված «ղբոսական» նյութը, որը Լեսաժի «Ժիլ-Բլասի» ֆրանսերենից կատարված թարգմանության մի հատվածն է, այսինքն «Թանկագին այն ատաղձը», որը հետագայում, խոստման համաձայն, միացնելով «մի տետրում», հրատարակիչը իր ընթերցողներին պիտի նվիրեր որպես ամբողջական գիրք։

Այս վեպի ընտրությունը և այն հատվածաբար իր բաժանորդներին մատուցելու ցանկությունն արդեն խոսում է Խ. Ոսկանյանի առաջավոր ըմբռնումների մասին։ XVIII դ. ֆրանսիական ռեալիստական գրականության արժարժած գաղափարները արևմտահայ գրասեր ընթերցողի գիտակցության մեջ արմատավորելու նպատակն էր հետապնդում վեպի տպագրումը։

Արդեն նշեցինք, որ «Ազգարար Բյուզանդյանը» հիմնադրման օրից վաստակեց մի հզոր թշնամի՝ ի դեմս «Արշալույս Արարատյանի»։ Այս երկու թերթերի միջև սկսված հակամարտությունը հայ մատենագիտության մեջ բացատրվում է «իրարու քաղաքական լրեր ուղղելու» հանդամանքով։ Սակայն չխորանալով հակակրանքի բուն պատճառների մեջ, այդ ձևով նախ նույնաց-

վում են թերթերի տարբեր քաղաքական ուղղությունները, նրանց միջև եղած սկզբունքային հակասությունները և հետո մութ է մնում «Ազդարարի» շուտ տեղի տալու բուն հանգամանքը: Եթե Գալեմբարյանն, օրինակ, պատճառաբանում է, թե «Ազդարարի» «աշխարհաբար լեզուն Կոստ. Պոլսո մեջ ամենեին ընդունելություն չգտավ», ապա մնում է զարմանալ, թե ինչպես էր այդ դեպքում նույն ընթերցողն ընդունում թուրքական պաշտոնաթերթի հայկական տարբերակի՝ «Լրո գրի» շատ ավելի խրթին աշխարհաբարը:

Ազգը լուսավորելու ազնիվ մղումով հայերեն թերթ հիմնած հրատարակիչը հաղիվ թե քիչ բաժանորդներ ունենալու պատճառով 5-րդ համարից (1841 թ., հունվար) դադարեցներ իր ձեռնարկած գործը և թերթի անունը նույնը թողնելով, այն հրատարակել հայատառ թուրքերեն: Իսկ եթե հայատառ թուրքերենի լույս ընծայումով նա ավելի շատ բաժանորդներ հավաքեց, ինչպես պնդում են մեր մատենագետները, ապա այս պարագայում հասկանալի չէ, թե ինչու 1843 թ. նա թողեց նաև այդ «Ազդարար Բյուզանդյանը» և իբր ստանձնեց ոմն անգլիացի արտոնատեր Ջերշիլի կողմից թուրքերեն հրատարակվող «Ճերիտեի հավատիսի» խմբագրությունը:

Մեր կարծիքով Խ. Ոսկանյանը պարզապես խուսափեց ավելի հզոր հակառակորդների՝ ամիրանների և «Արշալույս Արարատյանի» հարձակումներից², (վերջինիս շարահանդությունն այդ առթիվ բացահայտ է), և հայերենի փոխարեն հայատառ թուրքերեն թերթ հրատարակելով, փորձեց հանգստացնել նրանց: Բայց հայատառ թուրքերեն թերթն էլ իր էությունով չէր համապատասխանում լուսավորիչ-հրապարակախոսի նախասիրություններին և սկզբունքորեն դեմ էր նրա նպատակադրումներին: Անհնար է նույնիսկ կարծել, թե ազգի լուսավորությունը երազող Ոսկանյանը կարող էր անտեսել իր առաքելությունը մայրենի լեզվով կատարելու հանգամանքը: Այդ են հաստատում հետագայում «Նյու-Յորք Հերալդի» և «Մասիսի» բաղմամբիվ համարներում տպագրված նրա հոդվածները՝ լի հայրենասիրությամբ ու մի ազգ, մի միություն լինելու գաղափարախոսությամբ:

Մենք քիչ գիտենք այն մասին, թե ինչ ուղղություն տվեց իր գործունեությանը Խ. Ոսկանյանը «Ազդարար Բյուզանդյանի» դադարից հետո մինչև 1854 թ.: Մի բան պարզ է, որ եթե նա իրոք 1843 թ. խմբագրել է «Ճերիտեի հավատիսի» թերթը, ապա վերջինիս ունեցած ընդհանուր հաջողությունն ու տպագրած նյութերի բարձր որակը կրկին անգամ դրսևորում են Ոսկանյան լրագրողի լայն ընկալումներն ու մեծ կուլտուրան:

Դրանում համոզվելու համար բավական է թերթել «Լրո գիրը», որի էջերը մանավանդ 1846 թ., լի են «Ճերիտեի հավատիսիից» կատարված քաղվածքներով: Այդ նյութերը կարդացվում են հետաքրքրությամբ, գրված են աշխույժ, պատկերավոր լեզվով: Նման մի թերթ 40-ական թթ. ի վիճակի էր ստեղծել Խ. Ոսկանյանը (Թուրքիայում ապրող անգլիացիները հաղիվ թե թուրքերենին այդ կատարելությամբ տիրապետելու ջանք թափեին): Պատահական չէ, որ 1853 թ. հիմնված «Մասիսը» իր ծրագրային հայտարարության մեջ նույնպես խոստանում է դիմել «Ճերիտեի հավատիսիին», որն, ըստ երևույթին, պաշ-

2 Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1840, № 14, 1841, № 15, 43, 1842, № 108 և այլն:

տոնական հաղորդումների մեջ անհամեմատ ավելի լայնախոհ՝ ու վստահելի էր, քան նույն ժամանակ լույս տեսնող «Խազվիմի վագային»³։

Անցյալ դարի 40-ական թթ. պոլսահայ հրապարակախոսությունների մեջ առանձնապես հետաքրքիր է մի հոդված, որի վրա կանգ առնելն անհրաժեշտ է։

Խոսքը վերաբերում է անգլիական «Մարթա մեյլ» թերթից «Հայաստանի» կատարած արտատպությունը։ Նրա տակ հեղինակը ստորագրել է «Հայ մը» կամ, որ ավելի ճիշտ կլիներ թարգմանել, «Հայու տղա»։ Այսպես միշտ ստորագրել է Խաչատուր Ոսկանյանը «Մասիսում» և «Նյու-Յորք Հերալդում» տպագրած իր հոդվածների տակ։

«Հայաստանի» խմբագիր Հովհաննես Չամուռնյանը վերոհիշյալ նյութը թարգմանել և արտատպել է պատրիարքարանի պաշտոնաթերթում, նպատակ հետապնդելով հոդվածի միջոցով ցույց տալ, թե ինչպես եվրոպացիները վատ են վարվում հայերի հետ, արհամարհում են նրանց, ուստի ամենեին հարկ չկա, որ արևմտահայերը «ապականված», «վնասակար», «անկրոն» եվրոպա ուղարկեն իրենց որդիներին, ուր նրանք ուսման փոխարեն «խառնակ» գաղափարներ միայն կարող են յուրացնել։ Սակայն իր նախագծումների մեջ հեռուն չի գնացել Չամուռնյանը, քանի որ «Մարթա մեյլում» հանդես եկած «Հայ մը» ստորագրողը քաղաքական ասակետից շատ ավելի կարևոր հարցադրումներ է արել, քան այդ կողեր «Հայաստանի» հետադեմ խմբագիրը։

Հրապարակախոսական նույնիսկ արդի պահանջների տեսակետից փայլուն ոճով, ոչնչացնող ծաղրով և ուժեղ տրամաբանություններով գրված այդ հոդվածը մի բանավեճ է անգլիական «Մորնինգ պոստում» արևմտահայ հարուստների և նրանց հետ միասին ամբողջ հայ ժողովրդին ամբաստանող ժուռնալիստի դեմ։ Նրա հրապարակ ելնելու իսկական դրդապատճառները բացահայտելով, Ոսկանյանը միաժամանակ հարցը խորացնում է՝ ծավալվում ենթակա ժողովուրդների նկատմամբ Թուրքիայում տիրող խտրական քաղաքականությունից և եվրոպական տերությունների՝ այնտեղ բանեցրած տմարդի վարքագծի շուրջը։

Հոդվածի ոճը, լեզուն, համեմատությունները, անսպասելի ու սրամիտ եզրահանգումները ամբողջովին հիշեցնում են «Ազդարար Բյուզանդյանի» խմբագրին։

Ծավալուն լինելու պատճառով անհնար է հոդվածն ամբողջովին մեջ բերել, սակայն մի հատված նրանից կարող է բնորոշել հեղինակի սուր տրամաբանությունը և անկախ ու ազատ մտածելակերպը։ Անգլիական թերթում հայ ժողովրդի հասցեին արված «գլավուր» վիրավորական արտահայտությունները ահա թե ինչպես է պատասխանում «Հայու տղան»։

«Մեր ձեռքեն ուրիշ բան չի գար, այլ միայն Օքսֆորդի ճեմարանին առաջարկել թե ասկեց ետքը Հուելյդիին տրամաբանությունը մեկդի դնեն ու աս նամակագրին աղաչեն, որ իրենց նոր դասագիրք մը շինե տրամաբանության վրա։ Որովհետեւ պետք է ճշմարտությունը ղրուցենք, ուստի կոպարտավորվինք դիտել տալու մեր զվարճախոս պարոնին, թե ան խայտառակ վատ անունը որ ինքը պարծենալով մը կ'սե թե տաճիկները հայոց կկանչեն, ճիշտ իր քսածին

³ Մեր նպատակներից դուրս է այստեղ մանրամասն շարադրել «Ենթիտեի հավատիսի» հիմնադրման և Խ. Ոսկանյանի խմբագիր լինելու հանգամանքները։

պես չէ... այլ պոֆլու կյավուր է, և ինքը աս բանին վրայոք աղեկ տեղեկություն ստանալու համար աշխատանքի չի փախչիր նե (թեպետև իրեն կխրատեմ որ զուր տեղը չի հոգնի, ինչու որ եթե տգիտությունը երջանկություն է, հիմարություն է գիտուն դտնվելը) ան ատենը վարմանալով կիմանա թե աս վատ անունը միայն հայոց չէ տրված, այլ բոլոր կյավուր եղողներու՝ առանց խտրության: Ուստի կաղաչեմք որ աներողամիտ ըլլայ մեզի թե որ մենք հայերս ալ համարձակինք աս մասիս մեջ զինքը մեզի հաղորդակից համարելու, ինչու որ իրեն Վեհափառ Տիրուհին ալ (ակնարկում է թագուհուն — Վ. Ղ.), իրեն բնական քաղցրությունը և մարդասիրությունը չի նայելով, աս կողմանե ազատ չէ...»⁴:

Մինչ երկրորդ անգամ, աշիսին 1854 թ. Ամերիկա մեկնելը, այլևս ուրիշ առիթներով չենք հանդիպում Խաչատուր Ոսկանյանի անվանը: Նրա կենսագիրներից առավել հավաստին ու տեղյակը՝ Մուշեղ Եպիսկոպոսը, «Ամերիկահայ տարեցույցում» գրած ընդարձակ հոդվածում լռում է հրապարակախոսի Կ. Պոլսում անցկացրած մեկ տասնամյակի մասին:

Սակայն դրա փոխարեն՝ առատ են հետադա տարիներին վերաբերող նյութերը, որոնք պարզաբանում են հետաքրքիր այդ անձնավորության կյանքի ու գործունեության երկրորդ շրջանը:

Խ. Ոսկանյանը ծնվել է հավանաբար 1818 թ., Կ. Պոլսում (մահացել է 1900 թ.), քանի որ կենսագրի վկայությամբ նա 1834 թ., 16 տարեկան, մեկնել է Նյու-Յորք, դառնալով XIX դ. սկզբներին Ամերիկա եկած առաջին հայերից մեկը: Վեց տարի միսիոներների հովանավորությամբ ու հսկողությամբ Նյու-Յորքում սովորելով, նա ձեռք է բերում լայն գիտելիքներ, տիրապետում է մի շարք օտար լեզուների: 1840 թ. վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ ծավալած գործունեության քիչ թե շատ ծանոթ մանրամասներին մնում է ավելացնել «Աղդարար Բյուզանդյանի» փակման կապակցությամբ Մուշեղ Եպիսկոպոսի ասածը. «Աղդարարում», — գրում է Ոսկանյանի կենսագիրը, — կհարձակի ամիրաներուն վրա, մասնավորապես Փափաղյան Ճանիկ ամիրայի դեմ, որուն աղդեցությամբ թերթը կխափանվի»:

Ճանիկ ամիրան, ըստ երևույթին, միայն հավելումն է այն մեծ բանակի, որը, «Արշալույս Արարատյանը» ղենք դարձրած, ծառացել էր նորեկուկ «Աղդարար Բյուզանդյանի» դեմ:

Լրագրության իր ցանկացած ասպարեզում ձախողում ապրելով, 1854 թ.⁵ Ոսկանյանը նորից բռնում է նոր աշխարհ տանող ճանապարհը և հենց նավի մեջ էլ ծանոթանում է հետազայում իր ողջ կյանքում խոշոր դեր խաղացած մի մարդու՝ «Նյու-Յորք Հերալդ» թերթի խմբագիր Զեյմս Գորդոն Բենեթի հետ: Ոսկանյանը Բենեթին դուր է գալիս իրենց բնավորությունների ընդհանրությամբ, բարեկիրթ վարվելաձևով, լրագրողի իր անցյալով և դյուրությամբ «քանի մը եվրոպական լեզուներ խոսելու» կարողությունը:

⁴ «Հայաստան», Կ. Պոլիս, 1847, № 73:

⁵ Մուշեղ Եպիսկոպոսը իրավացիորեն նշում է, որ այս թվականը «Արաքսի» 1907 թ. Բ տարի, թիվ 3-րդում Հ. Գասպայանի կողմից սխալ է մատնանշված, որի համոզմամբ, Խ. Ոսկանյանը կրկին Ամերիկա է մեկնում մեկ՝ 1848 թ. և մեկ էլ՝ 1863 թ.: Ինչպես կհամոզվենք իր իսկ՝ Ոսկանյանի վկայությունից, վերջինս իրականում երկրորդ անգամ Ամերիկա է մեկնում միայն 1854 թ.:

Ոսկանյանը Նյու-Յորքում դառնում է համբավ ունեցող լրագրող: Նրան ճանաչում էին և՛ աղգանունով, և՛ ղեմքով: Այս է վկայում նրա կյանքի հետ կապված անեկդոտի նմանվող մի պատմություն, որը հիշվում է Ոսկանյանի բոլոր կենսագիրների կողմից⁶:

Երկար տարիների բացակայությունը Ոսկանյանի մեջ չի կոտրում կարոտն ու սերը դեպի հայրենիքը: 1871 թ., տասնյոթ տարի անց, նա նորից ացելում է Պոլիս: Այդ մասին տեղեկանում ենք հենց իր՝ «Մասիսում» տպած հոդվածից՝ զրված դեռևս ճանապարհին: Հետաքրքիր է այդ նամակը նրանով, որ կրկին հիշեցնում է Ոսկանյանի հյուսիսում ու սրամիտ ուժը, ընթերցողի հետ զրույցի բռնվելու անմիջականությունը: «Տասնյոթ տարի Ամերիկա պանդորստնալես վերջը,— գրում է նա,— միտքս դրի որ աշվներս վերջի անգամ չգոցելես հայրենիքս անգամ՝ ալ տեսնեմ...»: Լիվերպուլում, Մանչեստրում իր ճանաչած և չճանաչած, բարեկամ և ոչ բարեկամ հայերին ացելելով, նա հիացմունքով է խոսում հայրենիքից հարկադրված հեռացած, բայց հայրենիքի կարոտով ապրող նրանց ջերմ հոգիների մասին և խիստ դրվատական խոսքեր ուղղելով իրեն հյուրընկալող հայ տիկնոջը, հումորով գրում է, որ եթե այդ տիկինը «Պոլսո աղջիկների հիմիկվան վիճակը կներկայացնես, կաղաչեմ բարեկամներուս, որ բարեհաճին անհապաղ ինձ համար աղջիկտես ընելու»⁷:

Դեռ «Նյու-Յորք Հերալդի» էջերում ևս Ոսկանյանը պայքար էր սկսել ամերիկյան միսիոներների երկերեսանի քաղաքականության դեմ, որոնք Թուրքիայում ներկայանալով որպես հայերի փրկիչներ ու հովանավորներ, սեփական հայրենիքում ամբաստանում էին նրանց, համարում կիսավայրենիներ, քաղաքակրթության շեմից ներս չմտած ժողովուրդ, որին լուսավորելու, բարեկրթելու ծանր «միսիան» իբր ընկած է ամերիկացիների ուսին: Միսիոներներն այդպես ծանրացնում էին Թուրքիայում կատարած իրենց գործը, ձգտելով այդ ճանապարհով ավելի շատ դրամ կորզել ամերիկյան առաքյալներին հովանավորող «Պորտ» ընկերությունից:

Ամերիկյան «Պորտ» ընկերության դեմ մղած պայքարը ևս Ոսկանյանն ավելի խորացնում է «Մասիսում» տպած հոդվածներում: Դրանցում նա հանդես է գալիս արևմտահայությանը տվյալ փուլում խիստ հուլող՝ ազգամիավորման դադափարի պաշտպանի դերում:

1863 թ. «Նյու-Յորք Հերալդում» ունիթորների դեմ տպագրած իր հոդվածն ուղարկելով «Մասիսի» խմբագրություն, Ոսկանյանն ուղում էր հայրենակիցներին հավաստիացնել, որ կրոնական դավանանքը չպետք է որևէ վճռական դեր խաղա ազգի միասնության գործում ու պառակտում մտցնի նրա օրգանիզմի մեջ: Ընդհակառակը, այս կամ այն դավանանքին պատկանելու խնդիրը համարելով յուրաքանչյուր անձնավորության խղճի ու համոզմունքների հարց, նա գտնում էր, որ ազգամիավորման ձգտման մեջ դավանանքը պետք է դրվի միայն երկրորդական տեղում:

Ոսկանյանի հոդվածը «Մասիսը» հարկ է համարում հատուկ առաջաբանով իր ընթերցողներին ներկայացնել և գրում է. «Երկար ժամանակ ե լիք Ամերիկա գտնվող արգո հաշատուր աղա Ոսկանյան բարեկամնիս՝ Նյու-Յորք Հերալտ լրագրին հոկտ. 3 թիվը դրկած է մեղ, մեջը Տաճկաստանի վերաբեր-

⁶ Տե՛ս նշված «Ամերիկահայ տարեցույցը», Պոսթոն, 1912:

⁷ «Մասիս», 1871, մարտի 20, № 1067:

յալ զանազան նյութեր գտնվելուն համար»։ Այդ նյութերից թերթը թարգմանում է միսիոներներին մերկացնող հոդվածը։

Միստր Ռոբերտը, որը ունիթորների գիրկն անցած երեխաներին ուսում տալու համար վարժարաններ էր բացում, նման մի ձեռնարկություն է հիմնում նաև Ամերիկայում։ Դրան վերաբերող ծանուցման մեջ հայտնվում է, թե վարժարանի նպատակը «որևէ մեկի հավատքին դիպչելը չէ»։ «Բայց, — ղգուշացնում է Ոսկանյանը, — Պոլսո մեջ ասոր հավատացող չկա, որովհետև վարժարանին տնօրենը (մսթր Համլին) ասկե առաջ կրոնք քարոզող միսիոնար մըն է, երկրորդ վարժապետը՝ Ամերիկայի մեջ աստվածաբանություն սորված անձ մըն է, երրորդն ալ Կ. Պոլիս բնակող միսիոնարի մը որդին և համբավ վարժապետ մ'է։ Ահա այս երեւելի գիտնականներեն կբաղկանան վարժարանի ուսուցիչները։

Կ. Պոլսի մեջ կրոնի ազատությունն անսահման է, — շարունակում է հրապարակախոսը, — մենք կուզենք, որ այս վարժարանն առաջ երթա, բայց մյուս կողմանե կրոնք տարածելու հոտ ալ կառնինք, կամ մեզի կթվի թե Տաճկաստանին մեջ հիմա հարգերնին կորսնցնող միսիոնարներուն մեկ նոր հնարքն է։

Մսթր Ռոբերթին ըրածը մեծ բարեգործություն մըն է, բայց դժբախտաբար Ամերիկացոց ըրած բարեգործությանց մեծ մասին պես ասոր ներքեն ալ կրոնական դիտում մը կերևի»⁸։

Ամերիկյան «Պորտ» ընկերության դեմ «Մասիսի» 1880-ական թթ. համարներում տպված հոդվածները համապատասխան արձագանք են գտնում պոլսահայ լիբերալ պարբերականի էջերում։ Ոսկանյանին սիրով ձայնակցում է այդ թվականների ամենաաչքի ընկնող հրապարակախոսներից մեկը՝ Բյուզանդ Բեչյանը։

Փոխվել էին ժամանակները, փոխվել էր իրադրությունը։ Օտար երկրների օգնությանը հույս դրած արևմտահայ մտավորականությունը հանգել էր այն եզրակացության, որ թուրքական բռնությունից ազատվելու համար նախ և առաջ անհրաժեշտ է միավորվել։

1880 թ., հավանաբար երրորդ անգամ Կ. Պոլիս գալով, կամ գուցե 1871 թ. մինչև 80-ական թթ. այնտեղ մնալով⁹, Խ. Ոսկանյանը «Մասիսի» էջերում կրթոտ ելույթներ է ունենում տարբեր դավանանքի պատկանող հայերի միացման անհրաժեշտության օգտին։ Չէ՞ որ, վերջին հաշվով, մեկ ազգ լինելով, հայերն ունեն մեկ միասնական երկիր, ինչո՞ւ, ուրեմն, նրանք պետք է ունենան երկու եկեղեցի։

Եվ ի՞նչ են անում այսրան ժամանակ Հայաստանում ամերիկյան «Պորտ» ընկերության առաքյալները, ո՞րն է նրանց դերը։ 1880 թ. «Մասիսի» № 2528-ում տպված և այնուհետև շարունակվող «Ամերիկայի Պորտ ընկերությունն և Հայք» հոդվածաշարում Ոսկանյանն այսպես է պատասխանում այդ հարցադրումներին. «Ավետաբեր» անուն լրագիրն «Ամերիկյան Պորտ վասն առաքելության» կոչված ամերիկացի միսիոնարներուն ընկերության մը կողմանե կհրատարա-

⁸ «Մասիս», 1863, № 612։

⁹ Այս է վկայում թեկուզ և այն փաստը, որ «Մասիսի» № 2695-ում (13 օգոստոս) լույս տեսած հոդվածով Խ. Ոսկանյանը պատասխանում է նույն «Մասիսի» № 2691-ում (8 օգոստոսի) տպագրված հոդվածին, այսինքն անհնարին է, որ 5 օրում «Մասիսը» հասնեի Նյու-Յորք և Ոսկանյանի պատասխան հոդվածը ուղարկվեր Կ. Պոլիս, եթե այն գրվեր նույնիսկ թերթը ստանալու վայրկյանին։

կի: Խմբագիրը միսիոնար է: Այդ լրագրին մեջ ժամանակով գրված էր, թե «միսիոնարի գործը եկեղեցի հաստատել ու անցնել ուրիշ տեղ երթալ է...»: Բանին այսպես ըլլալը գիտնալով, բողոքական հայոց մեջ ոմանք կըսեին թե որովհետեւ իբր կես դար է հորմեհետեւ միսիոնարք հայոց մեջ եկեղեցիներ հաստատելու գործը կշարունակեն, ժամանակ է և անցած ալ է, որ նոքա անցնին, երթան ուրիշ միլիոնավոր ժողովրդաց մեջ գործելու, որք Քրիստոսի անունն անգամ լսած չեն...

Հայք, լուսավորչական թե բողոքական (քանզի բողոքական հայք ոչ նվազ փափաք ունին Պորտ ընկերության հայոց մեջ ղրկած առաքելության ղաղրիլը տեսնելու) առջնին երկար ճակատամարտ մը ունին... ուստի իրենց զորութիւն համար, լուսավորչական և բողոքական հայք, հարգելով միմյանց կրօնական գաղափարները, միութեամբ գործելու պետք է առաջնորդվին, քանի որ միութիւնը զորութիւն է, միութիւնը ասպատանարան է»:

Պարզաբանելով օտարերկրյա միսիոներների քաղաքական բուն նպատակները, Ոսկանյանը գտնում է, որ ինչպես Հռոմի կաթոլիկական «Պրոպագանդան» է այլ երկրների իշխանութիւնների օգնութեանն ասպակինած իր թեւերը տարածել քրիստոնյա ժողովուրդների վրա, այնպես էլ «Պորտ» ընկերութիւնն է դիմում տվլալ երկրի իշխանութիւնների զորութեանը: Թուրքիայի պապական հայերը, գրում է հրապարակախոսը, «Պրոպագանդայի» հոգևոր և սուլթանի քաղաքական իշխանութեան տակ են, այնպես, ինչպես ամերիկյան միսիոներներին ենթարկված հայերը՝ ամերիկյան բողոքականների իշխանութեան տակ են: Եվ ի՞նչ տարբերութիւն կա «Պրոպագանդայի» և «Պորտի» վարած գծի միջև:

«Պրոպագանդութիւնը, — պատասխանում է Ոսկանյանը, — մարդոց խորհել կսորվեցնել, իսկ Պապականութիւնը մարդիկ խորհելե կարգիլ: Առաջինը մարդու միտքը ազատութեան մեջ կպահէ, իսկ վերջինը գերութեան մեջ, մեկը ամեն բան քննել ու աղեկ ընդունիլ կհորդորե, մեկալը մեկ բանի մը վրա քննութիւն չընել և եպիսկոպոսին կամ քահանային պատվիրանացը հրնաղանդիլ կհրամայէ»¹⁰: Ամերիկյան միսիոներներին Ոսկանյանը համեմատում է ոստիկանների հետ, որոնք հսկում են հայերին, որպեսզի նրանց «հոգիներին չտիրանան» այլ երկրների բողոքականները: Նրանց քարոզած ազատութիւնը ձեւական է, քանի որ բացի աղովթի և պաշտման համար ի մի եկած հավաքութեաներից, հայերն այլ ղեր չունեն միսիոներների հիմնած եկեղեցիներում ու վարչութիւններում, և թեև միսիոներների ամբողջ խնդիրը հայերի շուրջն է պտտվում, բայց դեռ գտնված չէ մի հայ, որ նրանց մոտ պաշտոնի արժանացած լինի:

Պապականների արհամարհական և մեծամիտ վերաբերմունքի ապացույց է՝ արդյո՞ւ վերջերս տեղի ունեցած միջադեպը, երբ կաթոլիկ հայերը «իրենց աշատ կարծելով» բողոք հղեցին Հռոմի պապին՝ ընդդէմ իրենց պարագլուխ Անտոն Հասունյանի: Բայց ի՞նչ ստացան փոխարենը. պապի բանադրանքը և պատիժները: Նույն բանը տեղի չունեցավ նաև բողոքական հայերի հետ, երբ նրանք 1846 թ. առանց «Պորտ» ընկերութեան թուլտվութեան, Բերալում եկեղեցի կառուցեցին ու այդ բանի համար մինչև հիմա պարսավվում են

¹⁰ «Մասիս», 1880, № 2571:

«Պորտի» կողմից որպես «անհնազանդներ»։ Այս է հավատի հավասարությունը, հարցնում է հրապարակախոսը, երբ նման խտրություն է դրվում նույն դավանանքին պատկանող հայ և ամերիկացի հավատացյալների միջև։

Հորդորելով հայերին վերջապես ուժ գտնել իրենց մեջ՝ օտարի ազդեցությունից դուրս գալու, ինքնուրույնանալու, Ոսկանյանը գրում է. «Հայաստանյայց լուսավորչական և ավետարանական եկեղեցիք իբր քույր եկեղեցիներ նկատելով և հարգելով զմիմյանս, դերժ օտարի աններդաշնակ ներկայութենն և ազդեցութենն, ինչպես վարչությունին առանց օտարի առաջնորդության, ինքնաշարժ և ինքնավաստակ բարեկարգեցին, որ պատիվ է իրենց, նույնպես եկեղեցիին, ինչպես ի հնումն, նույնպես այժմ իրենք պիտի բարեկարգեն, և իրենք պիտի ըլլան իրենց լուսավորիչներն ու բարեկարգիչներն։ Այս է բնականը, այս է ուղիղը»¹¹։

Ոսկանյանն այնուհետև բացահայտում է «Պորտի» քսու երկերեսանիությունը, որը նորություն լինելով արևմտահայերի համար, վաղուց հայտնի էր ռեյու-Յորք Հերալդի» ընթերցողներին։

Նա բերում է փաստեր միսիոներների հողվածներից, որոնցում հայերն աղավաղված, այլանդակ ու անբարենպաստ լույսի տակ են ներկայացվում ամերիկացիներին։ Ըստ միսիոներների՝ հայերն իրենց հայրենիքում ապրում են գրեթե տոհմատիրական բարքերով, խտրություն չեն դնում ընտանիքների մեջ, ուտում են միայն սև հաց և զարմանում են ամեն ինչի վրա, որ կապված է քաղաքակրթության հետ։ Պարզվում է, որ եթե միսիոներները չժամանեին Արևմտյան Հայաստան, և չարժանանային հայոց պատրիարքի տեսությանը, ապա հայ պատրիարքն ինքը պիտի մեկներ Ամերիկա, աղաչելու քաղաքակրթ այդ երկրի առաջալններին՝ գալ և լուսավորել իր խավարյալ ժողովուրդը։

Հրապարակախոսն ազնիվ դարձյալով է արձանագրում այն անբարեխղճությունը, որ միսիոներները ցուցաբերեցին Հայաստանում։ Նրանք գոնե չբարեհաճեցին ծանոթանալ 500 տարուց ի վեր օսմանյան պետության լծի տակ տառապող «անգին մշակույթ ունեցող» ժողովրդի պատմությանը, չփորձեցին հասկանալ, որ այն ամենը, ինչ նրանք տեսնում են Թուրքիայում՝ դեռ հայկական չէ և որ թուրքերի իշխանության տակ ձնշված հայերը ի վիճակի էլ չեն փոխելու այն, ինչը իրենց դուր չի գալիս։

Մի՞թե, բացականչում է Ոսկանյանը, հայերը, որ հինգ հազար տարվա պատմություն ունեն, հազար հինգ հարյուր տարուց ի վեր քրիստոնեություն են ընդունել, V դարից Սուրբ գիրք են թարգմանել և դեռ «Պորտ» ընկերությունը չստեղծված՝ Աստվածաշունչ, Ս. Ղազարի վանքում տպված ավետարաններ ունեն, որոնք գնելով միայն միսիոներները «հավատ տարածելու համար» Տաճկաստան մտան, իրոք ապրում էին բաղձակնությամբ կամ արդելում էին երկու սեռերի ալատ հաղորդակցությունը, որ հայերին այդ ձևով են ներկայացնում միսիոներները։ Եվ մի՞թե մենք, այս ամենից հետո, դեռ էլի պետք է հանդուրժենք ամերիկյան սուտ առաքյալների բռնությունները և մեր նկատմամբ զործադրած անարգանքները։ Միսիոներներին Հայաստանից վըռնողը, եղրակացնում է Ոսկանյանը, իսկ եթե այդ անհնար է և մեր ուժերից

¹¹ Նույն տեղում։

վեր է, ապա նրանց մուտքը մեր ընտանիքները արգելելը, յուրաքանչյուր հայի ազգասիրական պարտքն է¹²:

«Հայու տղա մը» ստորագրությամբ Խ. Ոսկանյանի վերջին հոդվածին «Պորտի» և նրա քաղաքականության մասին արձագանքում է Բ. Քեչյանը «Մասիսի» նույն համարում տպված ղուգահեռ հոդվածով, ուր կարելի է կարգալ հետևյալ տողերը. «Ամերիկայի միսիոնարաց նկատմամբ իր լուրջ և ազգասիրական հրատարակությամբն արդեն մեր ընթերցողաց ծանոթ «Հայու տղուն» շորրորդ հոդվածը կհրապարակենք մեր այս ավուր թվով: Իր գրությունը կարևոր հայտնություններ կպարունակե մեր ազգին նկատմամբ միսիոնարաց բռնած ընթացքին վրա, բայց ոչ միայն ընթացքին վրա, զոր մենք հանապազ կտեսնեմք, որովհետև, Ամերիկայի միսիոնարք հարմար դատած են տեսակ մ'ընթացք բռնել ուղղակի հայոց առջև, և բոլորովին ուրիշ տեսակ ընթացք մը անոնց հետևեն: Հայերը շողորորթելով և անոնց նկատմամբ մեծ բարեկամություն ցուցնելով հանդերձ, միսիոնարք չեն վարանած զանոնք Զուլուններն քիչ տարբերություն ունեցող ցեղ մը ներկայացնել Ամերիկայի ժողովրդին առջև: «Հայու տղուն» հիշած իրողություններն անժխտելի ապացույցներով հաստատված բաներ են: Ինք երկար ժամանակ Ամերիկա բնակած է, և պատմած բաներեն շատերուն ինք ականատես վկա եղած է: Ավելորդ է ըսել, թե «Հայու տղայն» միսիոնարներին հարվածելով բողոքականություն ու բողոքականները հարվածած չլինիր. արդեն մեր արգո հոդվածագիրը ինք ևս անկեղծ ջերմեռանդ բողոքական մ'է, բայց՝ իբրև ճշմարիտ հայ՝ հակառակ է միսիոնարաց ընթացքին, ըստ որում միսիոնարություն ու բողոքականություն տարբեր բաներ են: Այսպիսի արժանահավատ և լուրջ հրատարակությունը օգտակար են՝ մեր ազգին հետ սերտ հարաբերություններ ունեցող այս ամերիկացոց ինչ ոգու տեր լինելը պայծառապես բացատրելու և ազգն ղգուշացնելու համար: Այս տեսությամբ, տարակույս չկա, որ «Հայու տղուն» աշխատություններն ապարդյուն չլիսին մնան»¹³:

Ինչպես տեսնում ենք, Ոսկանյանի հարցադրումները և միսիոններների իսկական էության բացահայտումը որքան տեղին էին, նույնքան էլ ժամանակին, և նրա ելույթներն արդեն համապատասխան հող ունեին Արևմտյան Հայաստանում, ընդունվում էին առանց այլևայլության և պոլսահայ մամուլի պաշտպանությունն էին գտնում:

«Մասիսի» 1880 թ. № 2618-ում «Պ. Ք., Հայու երկրորդ տղա» ստորագրությամբ հանդես է գալիս Բյուզանդ Քեչյանը: Ավելի կոնկրետացնելով Ոսկանյանի առաջ քաշած մտքերը, վերջինս առանձնապես կանգ է առնում այն վնասների վրա, որ հայ ժողովրդի ազգային ոգուն ու հոգեբանությանը հասցրել են միսիոններները:

Քեչյանի հոդվածից նախ հայտնի է դառնում, որ Ոսկանյանի ելույթները մեծ խոսակցությունների տեղիք են տվել արևմտահայ հասարակության մեջ, թեր, թե դեմ, միևնույն է, նրանք շարժել են մտքեր: Իսկ այն մարդկանց, որոնք աշխատում են իջեցնել Ոսկանյանի ելույթների արժեքը, պատրվակ բերելով, թե իբրև նա ուրանում է հայ ազգատ ընտանիքներին ամերիկացիների ցույց տված օգնությունը, Քեչյանը տալիս է կտրուկ պատասխան: Այդ մար-

¹² «Մասիս», 1880, № 2612:

¹³ Նույն տեղում:

դիկ, ասում է նա, պարզապես ամերիկացիների մարդասիրությունը շփոթում են միսիոներների կատարած վնասակար գործունեության հետ: Այս երկու հանգամանքները միմյանց հետ կապ չունեն, չեն կարող նաև միևնույն գնահատականին արժանանալ «և մեծ պետք է լիներ մեր կուրությունն, երբ անոնց պատահական օգնության սիրուն համար տևական վնասներուն աչք գոցեինք»:

Տևական վնասները, որոնց մասին այնպես ցավով խոսում է Պոլսի նշանավոր հրապարակախոսը, հոգեկան այլասերումն էր: Դրան էին աշխատում հասնել անդրօվկիանոսյան առաքյալները, հայերից խլելով, մտքից ու սրտից հանելով բուն ազգայինը, առանց որի ոչ մի ժողովուրդ չի կարող գոյատևել:

«Այն միակ շոշափելի օգուտն,— դրում է Քեչյանը,— որ միսիոնարաց պահանջքի կողմն անցնել կարելի է, անոնց հիմնած դպրոցներն և հրատարակած ուսումնական գրքերն են, բայց ինչպես որ Պարտիզական բողոքական հայու մը կողմանե «Մասիսի» գրած նամակեն ալ կրնա հասկցվիլ, և ինչպես որ ես իսկ երկար ժամանակ բողոքական հասարակության անդամ եղած լինելով կրնամ վկայիլ, այդ դպրոցներուն մեծ մասին մեջ ավանդված կրթությունն ազգային կրթություն մը չէ: Միսիոնարաց հսկողության ներքե գտնվող դպրոցներն ընդհանրապես ավելի աշխարհաքաղաքացի երիտասարդներ կը պատրաստեն, քան իրապես ազգային ոգով վառյալ հայեր»: Մերժելով միսիոներների հրատարակած շքեղավալ գրքերը, Քեչյանը հավաստիացնում է, որ հայերի հրատարակածները մեծ մասամբ նրանցից գերադանց են, իսկ ուրիշ պարագաների մեջ՝ միսիոներների ուսումնական ձեռնարկները վնասից բացի օգուտ չեն բերում:

Քեչյանն իր հոգվածն ավարտում է բացարձակ մարտակոչով: Նա առաջարկում է միսիոներներին անկեղծություն հանդես բերել իրենց գործի մեջ, թողնել հայերին, հեռանալ և ղեկավարել ուրիշ, ոչ քրիստոնյա ժողովուրդների «հոգիները փրկելով»¹⁴:

Միսիոներների դեմ Խ. Ոսկանյանի և նրան արձագանքած հայ հրապարակախոսների ելույթները շուտով տալիս են իրենց ցանկալի արդյունքը: «Մասիսի» 1881 թ. № 2887-ում տպվում է «Հայ բողոքական հասարակությունը» վերնագրով հոդվածը, ուր «Պորտ» ընկերության քարտուղար Տ. Ն. Կ. Քլարկը տեղեկացնում է, թե Ամերիկայի միսիոներները թուրքահայերի մեջ այլևս անլիք չունեն և աստիճանաբար պետք է ետ քաշվեն «կարգի բերելու» միլիոնավոր ուրիշ ոչ քրիստոնյա ազգերի:

* * *

Խաչատուր Ոսկանյանի՝ «Մասիսին» հղած հոգվածները չեն սահմանափակվում միայն արևմտահայությունը վերաբերող հարցերով: Հրապարակախոսի ընդգրկումները լայն են և նա լրագրող է բառիս իսկական իմաստով: Սա կարողանում է նյութը հետաքրքիր և աշխույժ մատուցել ընթերցողին՝ ինչ թեմայով էլ այն գրված լինի: Ամերիկյան ապրելակերպը լավ ուսումնասիրած թղթակիցը ամենևին կուրացած չէ այդ երկրի բարքերով և արժանին մատուցելով նրա առավելություններին, կծու ծաղրի և սուր քննադատության է են-

¹⁴ «Մասիս», 1880, № 2618:

թարկում «բիզնեսի» աշխարհը, ուր հարստության հասնելու միջոցների մեջ, համենայն դեպս, ոչ մի խտրություն չի դրվում:

Ոսկանյանին դուր է գալիս ամերիկյան մամուլի վիճակը, և այդ խիստ բնական է Թուրքիայում մամուլի նկատմամբ գործադրված բռնությունները ճաշակած մարդու համար: Նա այն կարծիքն է հայտնում, թե յուրաքանչյուր երկրի քաղաքակրթության նախապայմանը մամուլի և բեմի ազատությունն է: Ամերիկայում այն «բացարձակ» է և ահա թե ինչու. «Ձկա մարմին մը ընդհանուր կամ անհատական մտածությանց արտահայտության վրա հրահանգող... մամուլը կկատարե ամեն ինչ, և կքննադատե ամեն ոք. անուն, դիրք, աստիճան, հարստություն՝ նշանակություն չունին իր առջև, նորա համար չկան անմատչելի լեռներ», և այս ազատությունը արժեք ունի, որովհետև դրա հետևանքով «Ամերիկացի ժողովուրդը սորված է հարգել ամեն անձ իր բարոյական արժանյաց համեմատ...»¹⁵:

Սակայն ամերիկյան մամուլի ազատությունն իրական էր միայն որոշակի շրջանակներում: Նա թեև կարող էր ծաղրել կամ քննադատել այս կամ այն «գործի մարդուն», ասել իր մտածածը, բայց այդ քննադատությունը ամենևին չէր խանգարում վերջինիս դրության տերը մնալ բոլոր պարագաներում: Բնորոշ է այդ տեսակետից վերաբերմունքը մոլթ ճանապարհներով հարստացած մարդկանց հավաքական կերպար հանդիսացող Ջեյ Քուլդի նկատմամբ: Նա դուրս է եկել ճանապարհորդության և ահա թե ինչպես են լուսաբանում այդ իրադարձությունը ամերիկյան ժուռնալիստները. «Իր արքայական ճանապարհորդությունը մանրամասն պետք է ստորագրվի ճարտար գրչե մը: Ձկա՞ արդյոք Ջեյ Քուլդի լրագրական սպայակույտեն մին, որ միանա այս պատմական ճանապարհորդության: Կղրկենք զՔուլդ իբր կատարյալ ծաղիկ մը ամերիկյան հաստատությանց: Ինքն այս հողին հատուկ արտագրություն մ'է: Սպասենք լսել թե մարդկության մնացյալ մասն ինչպես պիտի նկատե զինքը»¹⁶: Ու կարծես չցանկանալով ետ մնալ իր գրչակիցներից, Խ. Ոսկանյանը նույնպիսի հումորով արևմտահայերին խորհուրդ է տալիս զգուշանալ ամերիկյան զուլամոլից, երբ նա Պոլիս կայցելի: «Երբոր Պոլիս գա,— գրում է նա,— չըլլա, որ իմացնեք իրեն թե հոգ ալ արժեթղթի հրապարակ մը կա, որչափ կարելի է՝ ջանացեք որ Ղալաթիո կողմը մուտք չկոխե, ավելի իր ուշադրությունը դարձուցեք Վոսփորի, կղզիներուն և Այեստեֆանոյի կողմերը, եթե Քեհատ խանե այցելել ուզե, զոց կառքի մը մեջ տարեք զինքը, իսկ եթե պնդե անպատճառ ծովու ճամբով երթալ, խոսքի բռնեցեք զինքը մինչև որ Գասըմ բաշա հասնիք»:

Ամերիկյան բախտախնդիրների կարգը ամենևին համակրելի չէ հայ հրապարակախոսին: Նա ցավով է արձանագրում, որ հենց այդ մարդիկ են գնում «ազատ», երկրի դատարանի «խիզճն ու արդարությունը» և իրենց դուլարների ուժով ստիպում են կատարել տնարդար որոշումներ, իսկ ազնիվ մարդկանց թողնում են թերթում հանդես գալու ազատությունը:

«Մասիսի» 1883 թ. № 3564-ում Ոսկանյանը նկարագրում է այդ կարգի դատավարական մի պրոցես, ուր խոշոր միջոցներ հափշտակած ավազակախումբի հանցանքը դատարանը ձեակերպում է որպես «ամբաստանություն դավալցության միացյալ նահանգաց գանձը կողոպտելու մասին», երբ ի զարմանք

¹⁵ «Մասիս», 1884, № 3642—3644:

¹⁶ «Մասիս», 1883, № 3424:

ողջ հասարակության՝ «երդվյալ դատավորի ամենեն վճռական և հաղթահարիչ ապացույցները յսեր հետո՝ չկարողացան ըմբռնել և իրենց վճիռը եղավ ի նպաստ ամբաստանելոց, և ատյանին առջև հայտարարեցին ոչ հանցավոր (նոր Կելդի)»:

Ոսկանյանը մերկացնում է ամերիկյան շահամույների ձեռնտվությունը, միմյանց խարդախություններն ու հանցանքները ծածկելու կարողությունը: Այնպես, որ Ջեյ Քուդի պես «մեծահարուստ ավաղակապետները» կասկածելի քաղաքական ու քրեական անցյալ ունեցող մարդկանց մեղքերը թաղում են գերեզմանոցում, նրանց արդարացնում են նույնիսկ կառավարության առաջ, քանզի իրենց կողմն ունեն Միացյալ Նահանգների դանձր...

Նախորդ էջերում մենք աշխատեցինք ցույց տալ, թե լուսավորիչ մտածող Խաչատուր Ոսկանյանն ինչպիսի հանդուրժողական վերաբերմունք ուներ դեպի տարբեր դավանանքները, որոնք նրա համոզմամբ չէին կարող վճռական լինել մարդկային փոխհարաբերություններում: Իր հոգվածներից մեկում նա անդրադառնում է այս հարցի նաև կիրառական կողմին:

«Նյու-Յորքի գլխավոր թերթերը, — գրում է նա, — քաղաքիս երեւելի քաղաքացի (բողոքական և կաթոլիկ) քարոզները համառոտելով կհրատարակեն ամեն երկուշաբթի, սովորություն մը, որուն եթե հետևի՝ շատ լավ կընեն հաշմամուլը, քանզի մեկ կողմեն ժողովրդյան կրֆական եռանդը կաբծարծվի, և մյուս կողմեն կստիպե քարոզիչները՝ վերջ տալ իրենց մաբղավալներուն, և պատրաստել զուտ ավետարանական և ժամանակին պահանջմացն համաձայն քարոզներ, այնժամ նվաղ պատճառներ պիտի ունենան գանգատելու թե ժողովուրդը աստված և կրոնք մոռանալու վրա է: Ուսյալ եկեղեցականք՝ փոխանակ բանաստեղծություն և թատերգություն գրելու, լավ կընեն եթե իրենց բոլոր ուշադրությունը նվիրեն իրենց նվիրական պաշտոնին հավատարմաբար կատարմանը, զոր այժմ այնպես բարձիթուղ ըրած են, և ժողովրդական հավատքը կործանելու համար եղած ջանից այնպես անղգա դարձած են, որչափ իրենց մեռյալները»:

Միանգամայն դործնական էր Ոսկանյանի մոտեցումը դեպի կրոնը: Արհամարհելով դավանական երկպառակություններն ու քաղաքական նպատակներով աբհեստականորեն հրահրված թշնամությունները, նա կոչ էր անում հոգևորականներին՝ կանգնել իրենց բարձրության վրա, օգնել ժողովրդի լուսավորությանը, առաջադիմությանը, բարոյական և հոգևոր նեցուկ դառնալ նրան:

Ոսկանյանի ամերիկյան շրջանի լրագրական կյանքի նույնիսկ ոչ ամբողջական ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ 1840-ական թթ. արժարժած նրա լուսավորական, առաջադեմ գաղափարները գնալով ոչ միայն խաւմրեցին, այլև ավելի լիարժեք, խոր և հստակ բովանդակություն ստացան: Այս վերջին հանգամանքը մի ավելորդ անգամ վկայում է, որ հանձին Ոսկանյանի՝ մենք ունեցել ենք համարձակ, ինքնատիպ, միշտ առաջ նայող մի մտավորական: Նրա հանդես դալր ընդդեմ իշխող կղերա-ամիրայական մտայնության նոր երևույթ էր, թեև հնթակա մեծ դիմադրության ու խոչընդոտների, որոնց անհապաղ նա հանդիպեց ի դեմս «Արշալույս Արարատյանի» և վերջինիս թիկունքում պատսպարված արեմտահայ ամիրայության:

ПУБЛИЦИСТИКА ХАЧАТУРА ВОСКАНЯНА

В. Г. ГУКАСЯН

(Резюме)

В трудах, посвященных армянской периодической печати, творчество Хачатура Восканяна мало исследовано, между тем его жизнь и деятельность сыграли важную роль в истории развития армянской просветительской публицистики первой половины XIX столетия.

Хачатур Восканян одним из первых отметил важность просвещения народа. Основанная им в 1840 г. в Константинополе газета «Аздарар Бюзандян» вызвала открытое недовольство амирав и смирнской газеты «Аршалуйс Араратян», под давлением которых она была закрыта.

Неблагоприятная обстановка, создавшаяся вокруг Х. Восканяна, заставила его в 1854 г. покинуть родину и вернуться в Нью-Йорк, где он получил образование. Здесь Восканян вскоре стал популярным корреспондентом «Нью-Йорк Геральда». Со страниц этой газеты Восканян знакомил американцев с историей армянского народа, одновременно разоблачал двуличную политику американских миссионеров в Западной Армении.

Значительны также статьи Х. Восканяна, выходившие на страницах «Масиса» в течение 80-х годов XIX столетия. В них публицист, откликаясь на передовые тенденции того времени, защищал идею единства и солидарности всего армянского народа.